Սիրելի առաջին կուրսեցիներ,

Շնորհավորում ենք ձեզ՝ Գիտելիքի, գրի և դպրության օրվա կապակցությամբ և բարի գալուստ մաղթում մեր մեծ ընտանիքում՝ Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտում: Վստահ ենք, որ մեր բուհում ստացած գիտելիքների ու հմտությունների, ձեր աշխատասիրության ու պատասխանատվության շնորհիվ հնարավորություն կունենաք դառնալու բարձրակարգ և պահանջված մասնագետներ ու ձեր արժանի տեղը գտնել կյանքի տարբեր ոլորտներում: Մաղթում ենք ձեզ բարձր առաջադիմություն, մասնագիտական ձեռքբերումներ և հաջողություններով լի տարի:

Սիրելի՛ առաջին կուրսեցիներ,

Սեպտեմբերի 1-ին հանդիպում ենք ՀՖԿՍՊԻ-ի բակում՝ ըստ սահմանված ժամանակացույցի: Միաժամանակ, խնդրում ենք ըմբռնումով մոտենալ ստեղծված իրավիճակին, պահպանել սոցիալական հեռավորություն՝ կանգնելով մուտքերի առջև արված գծանշումների մոտ:

Ստորև ներկայացնում ենք առաջին կուրսեցիների և ֆակուլտետների դեկանների հետ հանդիպումների ժամանակացույցը:

- Առողջարարական տեխնոլոգիաների, սպորտային տուրիզմի և կառավարման ֆակուլտետ - ժամը 09.30-ին (կինեզիոլոգիա, մարզական լրագրություն, փրկարարական գործ)
- Մարզչամանկավարժական ֆակուլտետ - ժամը 10.30-ին (ֆուտբոլ, մարզախաղեր, ցիկլիկ մարզաձևեր, ձյուդո, սամբո, ազատ ոճի ըմբշամարտ)
- Մարզչամանկավարժական ֆակուլտետ – ժամը 11.30-ին (հունահռոմեական, կարատեդո, թեքվանդո, շախմատ, գեղասահք, մարմնամարզություն, մարզական պարեր, ծանրամարտ, բռնցքամարտ)

- Առկա բակալավրիատի 1-ին կուրսի դասերը կսկսվեն սեպտեմբերի 1-ից առկա հիմունքներով, իսկ սեպտեմբերի 15-ից դասերը կկազմակերպվեն հիբրիդային եղանակով:
- Առկա բակալավրիատի 2-րդ, 3-րդ, 4-րդ և առկա մագիստրատուրայի 1-ին կուրսի դասերը կսկսվեն սեպտեմբերի 15-ից՝ հիբրիդային եղանակով:

Ուշադրություն՝

Ինստիտուտի շենք մուտք գործելիս կկատարվի ուսանողների անհատական ջերմաչափում: Բուհը վարում է ուսանողների և աշխատակիցների ջերմաչափման մատյան: Մատյանում գրանցվում են միայն 37 և ավելի ջերմաստիճան ունեցող ուսանողների և աշխատակիցների տվյալները, որոնց մուտքը բուհ արգելվում է: Շենքում գտնվելու ողջ ընթացքում դիմակ կրելը պարտադիր է: